

Այս նամակն առնելով Ռշտունին, շուտ մը ելաւ Կ'արինէն եւ առանց ժամանակ կորսնցնելու հասաւ Երիզայ, ուր յունաց քանի մը հազար զօրք ժողուած գտաւ, եւ յունաց զօրավարաց քաղաքավար յարգանօք ընդունելութիւնը զինք բողոքովին ապահովեցին: Մինչեւ որ Թումայ մէկ-երկու օրէն հասաւ պոնտացի զօրքերով եւ ամենայն բիւզանդական կեղծաւորութեամբ շնորհակալութիւնք յայտնեց սորա գալստեան, եւ թէ ինք ինչպէս որոշած էր առանց նորա խորհրդեան շարժմունք մը անգամ չընելու:

Հայոց զօրավարը, եթէ ի ձեռին չունենար այդ վերոյիշեալ նամակները, մանաւանդ Երիզացիէն, ամենեւին չէր վստահէր յունաց, բայց նա հաւատարմութեան արժանի մարդ էր. ուստի հանհոգս եւ զբաղեալ էր արաբաց արշաւանքին վրայ խորհրդակցելով յոյն զօրավարաց հետ՝ երբ յանկարծ քանի մը հարիւր սպառազէն շրջապատելով իւր վրանը՝ հայ իշխանը զինաթափ ըրին, եւ առանց ամաչելու՝ ոտքերը, ձեռքերը շղթայեցին, եւ այն ատեն միայն երեւցաւ Թումայ՝ երգիծանք եւ ծանականք երեսաց եւ շրթանց վրայ նկարեալ:

Թեոդորոսի սրտին մէջ երկիւղ ըսուած բանը մուտք գտած չէր, վասնզի մահն արհամարհել իւր սովորութիւնն էր ի տղայ տիոց, բայց երբ միտքը կ'ուզային ընտանիք, որ իրեն կը սպասէին, ազդն անտէրունչ, որու վրայ մտածողք շա՛տ քիչ էին, յունական դաւաճանութիւնը իւր բոլոր անարգութեամբ, արաբաց մոլեռանդն անգթութիւնը իւր բոլոր կատաղութեամբ, հայ նախարարաց յիմար շահասիրութիւնը, որ հասարակաց օգտին իրենց շահը ընկերացնելու մէջ չէին հասկնար իրենց անձանց եւ իշխանութեանց ապահովութիւնն եւ փրկութիւնը, իրեն այնպիսի դառն խորհրդածութիւնք կը պատճառէին, որ եւ ոչ Թումայի անարդ կերպաբանաց ակնարկութիւն ձգել եւ իր կերպը նշմարել միտքն ինկաւ, այլ նոյնպէս անտարբեր նայեցաւ, ինչպէս զբաղեալ մտօք ոք կը նայի՝ անտաշ քարի եւ հասարակ կոճղի վրայ:

Թումայ այս նայուածքը արհամարհանաց վերջին աստիճան համարեց, եւ ուզեց աւելի սաստիկ պատասխանել.

— Զու մի՛տքդ է, հա՛յ,— ըսաւ,— այն օրը, որ Պրոկոպիոսի՝ յոյն սպարապետի մը դէմ համարձակեցար բերան բանալ եւ իր արդար բարկութիւնն այն ատեն գրգռեցիր, որ մինչեւ իւր գաւազանը դասալիք փախստականիդ ետեւէն նետել պարտաւորուեցաւ: Ես այնտեղ ներկա էի:

Թեոդորոս ոտից գլուխ ակնարկ մը նետեց միայն անարգ մարդուն վրայ, ճիշտ նոյն ակնարկը, որ կը նետէ դաւեալ սեգ առիւծը երկաթեայ վանդակին մէջէն,